

### **Հրատարակչատան կողմէ**

Հատորը կողքի մը տակ կը խմբէ ստանպուլահայ հանրապետական ժամանակաշրջանի պատմուածքներէն նմոյշներ, որոնց մէջ կայ ծով, նաւամատոյց, շոգենաւ ու կղզի: Իր տեսակին մէջ եզակի այս հատընտիրը չի յաւակնիր ամբողջական հաւաքածոյ մը դառնալ նման բովանդակութեամբ գեղարուեստական երկերու, այլ կը ջանայ իր ներկայացուցած օրինակներով հետաքրքրութիւն ստեղծել ստանպուլահայ պատմուածքի հանդէպ՝ ցոյց տալով անոր գլխաւոր առանձնայատկութիւնները, որոնցմով սփիւռքահայ գրականութեան այս տարածքը զոնէ մասամբ տարբերած է իր նմաններէն, գրաւելով իւրայատուկ տեղ մը հայ գրականութեան ամբողջին մէջ: Հատորին մէջ Յակոբ Մնձուրիի, Երուանդ Կոպէլեանի, Զաւէն Պիպեռեանի, Վարդան Կոմիկեանի նման դասական անուններու կողքին տեղ գրաւած են Սօնա Տէր Մարգարեան-Թընկըրեանի, Անահիտ Վանի, Սեդա Թեւեանի, Արաքսի Նաթանեանի նման կին գրողներ կամ Վարուժան Աճէմեանի, Գեղամ Սեւանի, Ռաֆֆի Քէպապճեանի, Քրիստիան Բատիկեանի նման նախկին ստանպուլահայերու ստեղծագործութիւնները:

Հատորը անտարակոյս պատրուակ պիտի դառնայ ստանպուլահայ գրականութիւնը սեւեռելու նոր հայեացքով մը, ինչպէս նաեւ նոր աչքերով դիտելու այն սիրելի վայրերը, զոր մաշեցուցած ենք ամենօրեայ հայեացքով:

Հարկ է նշել, թէ պատմուածքները տեղադրուած են անկախ իրենց թուականէն կամ հեղինակէն, հատորը պատրաստած աշխատասիրողի հայեցողութեամբ, որոշ յաջորդականութեամբ մը, որ ներքին կապ մը կը ստեղծէ անոնց միջեւ:

Հատորին լուսանկարները, բացի «Կղզի» հատուածը բացողէն, կը պատկանին Արա Կիւլերի ոսպնեակին:

**Հրատարակուած են ու խմբագրուած են վերաբերեալ**

# ԿԱՊՈՅՏ ԵՐԱԶ

Ծովաբոյր ընտրանի  
ստանալու համար պատմություն

Արաս Հրատարակչություն  
A r a s Y a y ı n c ı l ı k  
İstiklal Caddesi, Hıdivyal Palas 231/Kat 1  
34430 Tünel, Beyoğlu-İstanbul  
Tel: (0212) 252 65 18 - 243 06 02  
www.arasyayincilik.com  
info@arasyayincilik.com  
Sertifika No: 44967

---

ARAS - ԱՐԱՍ 269

---

## ԿԱՊՈՅՏ ԵՐԱԶ

Քաղեց եւ Հրատարակչության պատրաստեց՝  
Սեւան Տէյիբմենճեան

Կողքը պատրաստեց՝  
Մելիսա Արսէնեան

Կողքի եւ ներդիր լուսանկարները՝  
Արա Կիւլէր

© Ara Güler / Ara Güler Doğuş Sanat ve Müzecilik AŞ

Տպագրություն  
Սենա Օֆսեթ

Ա տպագրություն յունուար 2022, Ստանպուլ  
Բ տպագրություն սեպտեմբեր 2023, Ստանպուլ

ISBN 9786257460040

# ԿԱՊՈՅՏ ԵՐԱԶ

Ծովաբոյր ընտրանի  
ստանպուլահայ պատմուածքի

*Քաղեց՝ Սեւան Տէյիրմենճեան*





## ՄԿՄԵԼԷ ԱՌԱՋ...

### ՍԵՒԱՆ ՏԷՅԻՐՄԵՆՃԵԱՆ

Մովն իր հեքիաթն ունի: Որպէս վայր է՝ կերպար մը, եւ գոնէ պոլսաբնակի մը երեւակայութեան մէջ կ'անկախանայ գեղարուեստական պատմումի դիպաշարէն ու հետզհետէ կը սկսի հիւսել զուգահեռ պատմութիւն մը: Այո՛, թէեւ ծովը ըստ երեւոյթին սովորական ջրատարածք մըն է, հանապազօրեայ կենցաղի բաժին՝ ծովով երկուքի, նոյնիսկ չորսի ճեղքուած այս քաղաքի բընակիչներուն համար, բայց երբեք հասարակացած, պարզացած չէ, հակառակ իր վրայ ի գործ դրուած տարատեսակ բռնութիւններու: Թերեւս մանաւանդ վերջին տասնամեակներուն ծովու դէմ կիրարկուած շինարարական աշխատանքները կամ քաղաքաշինութեան քօղով ծածկուած ինչ-ինչ ոտնձգութիւններն են մայրակը իրեն հանդէպ աճած հետաքրքրութեան, որ կը փորձէ պահպանել ինչ որ մնացած է, կամ կը ջանայ նոր լոյսով մը սեւեռել անցեալը ծովու ու քաղաքի յարաբերութեան՝ ներկան ալ կերպաւորելով, ընկալելով ըստ այդմ:

Մովը՝ իւր սարօքն՝ կղզիներով, նաւով, նաւամատոյցով հանդերձ, ամբողջութիւն մը կը կազմէ մեր մտածողութեան մէջ: Գրականութիւնն ալ, ըլլալով այդ հանրային մտածողութեան եզակի արտայայտութիւններէն մէկը, իր ծալքերուն վրայ միշտ կրած է այս իւրայատուկ վայրի, աշխարհագրական առինքնող տարածքի տարրերը: Երեմիա Քէօմիւրճեան դեռ Ժէ դարուն նաւով, ծովուն վրայ կը շրջագայէր նուաճելու համար պատմութիւնն այս քաղաքին՝ որպէս դեռ երէկ կատարուած յիշատակելի դէպք մը պատմելով նաեւ Ե դարէն յամեցող Մեծն Ներսէսի աքսորի ու բանտարկումի պատումը Մարմարայի կղզիներէն մէկուն վրայ:

Հեղինակը սոսկ գրուածք գեղեցկացնելու համար չի դիմեր ծովային տեսարանի, ինչ որ թերեւս ընդ չտես մը. գրողը իր կերպարի զգացումներուն արձագանգը չէ որ կ'որոնէ արքերու ծալքերուն, այլ անոնք՝ ծովն ու ծովու վերաբերեալ ամէն ինչ, որպէս ուրոյն կերպար տեղ կը գրաւէ գրուածքի երկայնքին: Հեղինակը լուս, չտեսնէ իսկ՝ ընթերցողը ակամայ կը դնէ զանոնք ո՛ւր որ պէտք է եւ ինչպէ՛ս որ հարկաւոր է՝ արդարացնելով իրեն վերագրուած համահեղինակի դերը: Ինչպէս պոլսեցի պարզ հետիոտնը ինքնաբերաբար կը փորձէ ծովուն դիրքը ճշդել, երբ գտնուի թաղի մը մէջ, ուրկէ ան չ'երեւիր:

Ընտրելու, դասակարգելու, ներկայացնելու դժուարին աշխատանք մը կը սպասէր զիս, երբ որոշեր էի վերջապէս ձեռնարկելու շատերու փափաքն եղող այս աշխատանքին: Անհրաժեշտ էր զսպուել՝ լոյս աշխարհ բերել կարենալու համար քիչ թէ շատ կոկիկ աշխատանք մը: Նախ հատորը պիտի ըլլար գեղարուեստական արձակ գործերու ընտրանի մը: Հոն պիտի չըլլար վէպ, յուշագրութիւն եւ բանաստեղծութիւն: Հետեւաբար որոշուեցաւ միմիայն ընտրել պատմուածքներ հանրապետական շրջանէ, այսինքն նմոյշներ 1923-էն ետք ստեղծուած ստանպոլահայ գրականութենէ: Այսինքն ընթերցողը այստեղ պիտի չկարենայ ընթերցել Մեծ ու Հալքի կղզիներու միջեւ երթուղարձող Զօհրապի «Արմենիցա»ն կամ դէպի Սկիւտար ընթացող նաւ մը նկարագրող Բաշալեանի «Իրացուհին»ը: Դեռ կրնայի Դուրեանի արգիաշունչ «Հայուհին» քերթուածը, Իշխանաց կղզեաց մատրիարք (ինչպէս զինք կը բնութագրէր հոգելոյս Մեսրոպ սրբազանը) Արմենուհի Թէրգեանի կամ Զահրատի բանաստեղծութիւնները, Կամսարականի «Վարժապետին աղջիկը» վէպէն հատուածներ, Երուխանի ձկնորսներու կեանքէն քաղուած իրապաշտ պատմուածքները, Թօլայեան-Կավոօշի կամ Վահան Փափագեան-Լիլայի ծովաբոյր ու կղզեշունչ ֆանթազիները, Մատթէոս Զարիֆեանի, Սիպիլի, Ինտրայի գրուածքները, Անայիսի, Զարուհի Գալէմքէրեանի, Վահան Թէքէեանի, Վահրամ Փափագեանի, Ատրինէ Տատրեանի եւ հազար ու մի անուններու յուշերէն հատուածներ քաղել ու դնել հատորիս մէջ, որ սակայն հետզհետէ պիտի փքանար, պիտի սոնքար՝ վերածուելու համար անփափաքելի հաստատօրիկի մը, մինչ սեղմ, կոկիկ ուրոյն ոսկեփորիկ մը ընծայել էր նպատակս:

Իբր այդ, հանրապետական շրջանի ստանպուլահայ պատմուհիները դարձան միակ սեւեռակէտս: Քանի որ ոչ բոլոր պատմուհիներն են որ ամփոփուած են առանձին հատորներու մէջ, նախ ձեռնարկեցի թերթատել գրական մամուլը. անշուշտ, կարելիի սահմաններուն մէջ, այսինքն միայն այն հանդէսները, որոնք հասանելի էին ինծի Պոլսոյ մէջ, ինչպէս՝ «Երջանիկ» տարեգիրքը, Ս. Փրկիչ ազգ. հիւանդանոցի ամսագիրը, «Սան»ը, «Հանդէս մշակոյթի»ն, դուրս թողլով օրաթերթերու կամ շաբաթաթերթերու գրական բաժինները, այլապէս ընտրանին կրնար վերածուիլ ծովու, նաւու, կղզիի պատմուհիներու ամբողջական հաւաքածոյի մը, ինչ որ նպատակս չէր եղած ի սկզբանէ: Ծայրէ ի ծայր ընթերցեցի պոլսահայ ծանօթ կամ անծանօթ պատմուածագիրներու հատորները, զորս ունէի գրադարանիս մէջ, աչք նետեցի ստանպուլահայ գրողներ ծանօթացնող կամ մեր գրականութեան համայնապատկերը ուրուագրող հատորներու եւ մէջտեղ բերի այն ինչ որ է հիմա ընթերցողիդ ձեռքին: Վստահաբար կան այլ գրողներ ու այլ պատմուածքներ ալ, որոնք կ'անցնին ծովու մօտ, նաւու մէջ կամ կղզիի վրայ, ինչպէս այնքան փնտուելով, գիրք ու մամուլ տակնուվրայ ընելով, իր գրչընկերները հարցուփորձելով հանդերձ գտնելը անկարելի եղած Վարուժան Աճէմեանի մէկ պատմուածքը, որուն իր մէկ գրուածքին մէջ կ'անկարկէ Երուանդ Կոպէլեան: Բայց արդէն այս հատորն ալ, ինչպէս ըսուեցաւ վերը, ո՛չ թէ ծովու, նաւու եւ կղզիի վերաբերող ամբողջական գործերը կողքի մը տակ հաւաքել յաւակնող հրատարակութիւն մըն է, այլ լոկ քաղուածք մը՝ տալու ճաշակ մը ստանպուլահայ գրականութեան, մատուցելու ընտրանի մը մեր հայրենի ծովաստանէն:

Հատորս, ինչպէս պիտի տեսնուի, բաղկացած է չորս բաժնէ: «Ծով» վերնագրուած առաջինը կը ներկայացնէ գանազան հեղինակներ, որոնք ի վաղուց հետէ կղզիներով նոյնացած ծովու եզերքի թաղերու ներքին կեանքը կը բերեն մեզի: Ուրեմն այս իմաստով կը վերակենդանացնեն կորուսեալ աշխարհ մը նաեւ, գրականի առընթեր կը ստանան պատմական, ճանաչողական արժէք մը: Երկրորդ բաժինը «Նաւամատոյց»ն է. վայր մը, ուր ընկերային տարբեր խաւերէ, տարբեր վայրերէ մարդիկ կը խըմբուին: Օրը յոգնութիւնը անոնց վրայ դրած ըլլալուն՝ քիչ մը



կ'անհամբերին անոնք նաևը սպասած պահուն՝ ժամ առաջ նստիլ ու երթալ ուզելով իրենց բնական թաղերը: «Նաև»ը, որ երրորդ բաժինն է, հակառակ մեռեալ հոգիները Հատեսի ստորերկրեայ աշխարհը առաջնորդող դիցաբանական նաևավար Քարոնի, յոգնած ու թմրած ճամբորդները կ'առաջնորդէ դէպի արքայութիւն: Ծովու այս փոխադրամիջոցը հասնումի վայրը կ'օժտէ երանելութեամբ, նոյնիսկ եթէ ան ըլլայ վանելի տեղ մը: Շոգենաւու ճամբորդութիւնը կը գեղեցկացնէ ու իմաստ կուտայ ճանապարհորդութեան: Բարեկամներ, որոնք զիրար չեն տեսած երկարատեանէ ի վեր, առիթ կ'ունենան երկար-բարակ խօսակցելու, առանձնութիւն նախընտրողները մէկ կողմ քաշուած օրուան թերթը կամ գիրք մը կը կարդան, թէյ կամ խմիչք մը շատ անգամ կ'ուղեկցի իրենց ծովու հաճոյքին, որ ամէն օր կրկնուելու բախտաւորութիւնը ունի՝ ըստ ձեր գացած տեղոյն հեռաւորութեան, մերթ քսան վայրկեան, մերթ ժամ մը կամ աւելի: Ու անոնք կը հասնին «Կղզի», վերջին հատուածը մեր հատորին: Երանութեան վայր մըն է ան մանաւանդ մանուկներու ու պատանիներու համար, շատ անգամ ամարանոց մը, մերթ քաղաքի ժխորէն փախչելու տարածք: Կղզին, մե՛ր կղզիները, կերպով մը քաղաքի երկարածգումն է՝ մերկացած բարեբախտաբար վերջինիս ժխտական բոլոր տարազներէն (գոնէ այդպէս էր մինչեւ վերջին տարիները), համեմատաբար պահող հայնոցի հնամենի առանձնայատկութիւնը, ինչպէս նաև հեռաւորութեան բաւական մը գեղչեալ միջոցներ:

Հակառակ կրկնուող անուններու ներկայութեան, հեղինակներու ինքնութիւնը բազմագոյն երանգապնակ մը կը ներկայացնէ: Արեւելահայ ծովագուրկ աշխարհատարածքէն Պոլիս հաստատուածներ, կամ հակառակը՝ Պոլսոյ ծովու կարօտն իրենց սրտին մէջ անթեղած՝ Հայաստան կամ այլ երկիրներ գաղթածներ, հանրապետական շրջանի տարբեր ժամանակները ներկայացնող տղամարդիկ ու կիներ: Պէտք է նշել, որ գլխաւոր սեւեռումը պատմուածքները ըլլալուն, հեղինակներու սոսկ անունները տուած ենք իւրաքանչիւր պատմուածքի սկիզբը, որպէս յաւելուած միայն նշելով այն աղբիւրները, որոնցմէ քաղուած են անոնք:

*Վստահաբար դեռ ըլլալու են ծովու, նաև ու կղզիի բովան-  
դակութեամբ այլ պատմուածքներ եւ թերեւս հետագային կա-  
րելի ըլլայ կազմել այլ հատոր մը եւս: Կամ թերեւս հնարաւոր  
ըլլայ այլ նիւթով, ըսենք Պէյօղլուի կամ շոգեկառքի եւլն. վերա-  
բերող պատմուածքներով կազմել այլ հատորներ: Սա ըլլայ  
սկիզբ մը ուրեմն եւ մաղթենք նոր հատորներու ստեղծումը՝ նոր  
անուններով, նոր պատումներով...*

նոյեմբեր 2021, Երուսաղէմ  
ի վանս Սրբոց Յակոբեանց





ԾՈՎ



# ԱԳՌԱԻՆ ՎԵՐԱԴԱՐՁԸ

## Արայ Կիւլէր

Մարդը ով գիտէ քանիերորդ անգամ ըլլալով պատուհանին կողմը նայեցաւ եւ ակամայ, նայուածքները երկիրքը պատող մութ ամպերուն մէջ խորասուզեց:

Հակառակ ամառնային իրիկուն մը ըլլալուն, առտուընէ ի վեր մութ օր մըն էր որ կը շարունակուէր: Ծովեզերեայ ճամբուն՝ փոռնքին կապուած նաւակները շարունակ կը ծփային: Այսուհանդերձ, ծովը ճմռթկած ճմեռնային տեսքը շատոնց կորսնցուցած էր:

Կապելային դրան առջեւ սիկառ ծխող նիհար դէմքով նաւապետը նաւամատոյցի կայմին վրայ թառիլ ուզող սեւ ագռաւ մը տեսաւ: Երկար պահեր սաւառնող ագռաւին նայեցաւ, յետոյ դանդաղ շարժումներով, սիկառը բերնէն առաւ եւ ոտքով ճզմելէ վերջ, յանկարծ կապելայէն ներս մտնելով՝ պոռալ սկսաւ.

-Ագռաւը... Ագռաւը...

Այս աղաղակէն վերջ կապելային մէջ պահ մը լռութիւն տիրեց: Ոչ մէկ բան շարժեցաւ, բայց պահիկ մը վերջ յանկարծ՝ վայրկեանական, ամէն բան սարսափահար շարժումի ենթարկուեցաւ:

Ծերուկ գինեպանը՝

-Ի՞նչ... Ի՞նչ ըսիր... ագռա՞ւը...

Միւսը լորձունքը կուլ տալով պատասխանեց.

-Ագռաւը...

-Ո՞ւր է:

-Սատեղը, հոս. նաւամատոյցին կողմը... կայմին վրայ:

Գինետան պատուհանին առջեւը երկու մարդ եւս նստած էին: Այս խօսակցութիւնը լսելէ վերջ ոտքի ելան յանկարծ եւ նիհար դէմքով նաւապետին մօտեցան:

Մին՝

-Ո՞ւր ըսիր...

-Կայմին վրայ, նաւամատոյցի կայմին վրայ:

Երկուքը միասին այդ կողմը նայեցան:

Միւսը՝

-Մահագոյժ ազուաւը:

Ծփացող նաւակներուն կողմէն եկող թեթեւ հով մը կապելային բաց դռնէն ներս մտնելով պատուհանին վարագոյրը եւ պիւֆէին ծածկոցները շարժեց: Կարծես նոյն պահուն կապելային ներսը՝ դող մը պատեց: Վայրկեանական կարասիները ջղային շարժումներ ունեցան: Մերկ սեղաններու փայտէ ոտքերը նիհարնալ սկսան: Հին տախտակամածը վախէն այնքան սաստիկ պրկուեցաւ որ իր ամենէն հին մասէն -գամերուն ճնշումին չզիմանալով- իր մարմնոյն վրայ ստիպողաբար ճեղք մը բացաւ:

Ծեր գինեպանը, նիհար դէմքով նաւապետը եւ պատուհանին մօտը նստող երկու հոգին աճապարանքով գինետան դրան առջեւ կանգ առին եւ նաւամատոյցին կողմը նայեցան:

Գինետան ետեւի ծայրը նստող մարդը, դարձեալ գլուխը բարձրացնելով պատուհանին կողմը նայեցաւ եւ բաց դռնէն տեսնուող նաւամատոյցի կայմին վրայ թառած սեւ ազուաւը տեսաւ: Պահ մը անոր նայելէ վերջ, աճապարանքի մատնուող ծեր գինեպանին, նիհար դէմքով նաւապետին, յետոյ միւս երկուքին նայեցաւ: Անոնց այս անտրամաբան աճապարանքին ոեւէ պատճառ չգտնելուն համար, նայուածքները դարձեալ երկիրքը պատող մուժ ամպերուն խորասուզեց:

Գինեպանը՝

-Ազուաւն է... եկաւ... ի՞նչ պիտի ընէք...

-Երթամ լուր տամ:

Նիհար դէմքով նաւապետը՝

-Եկեղեցի երթանք... եկեղեցի երթանք... աղօթենք...

Միւսը՝

-Երթամ կինս ու զաւակներս եկեղեցի վազցնեմ:

Ծեր գինեպանը՝

-Երթանք... լուր տանք ժողովուրդին, ազուաւը... ազուաւը եկաւ... դժբախտ օրերու հասանք:

Գինեպանը աճապարանօք սպունգը մէկդի նետեց եւ բաճկոնը առանց կոճկելու վերարկուն հագաւ: Բայց երբ բաց դռնէն հագիւթէ դուրս ելլելու վրայ էր, գինետան ետեւի անկիւնը նստող օտարականը յիշեց եւ յանկարծ անոր պոռալով.

-Պարոն, աճապարեցէք, անմիջապէս եկեղեցի ապաստանելու էք: Դժբախտութիւն մը պիտի պատահի...

Օտարականը անոր նայեցաւ, բայց միմիայն՝

-Ի՞նչ..., ըսաւ:

Գինեպանը՝

-Ես ձեզի այսքանը ըսի, մնացեալը ձեր գիտնալիք բանն է:

Այս խօսքերէն վերջ գինեպանը վազելով կէս մթազնող օրուան մէջ անհետացաւ:

Այդ վայրկեանէն վերջ կապելային մէջ բացարձակ լռութիւն տիրեց: Օտարականը դարձեալ դուրս նայեցաւ եւ քանի մը վայրկեանէ ի վեր իր տեղը հանգիստ թառած սեւ ագռաւը տեսաւ: Իր սեղանին ծածկոցին վրայ եղունգովը գիծեր քաշելէ վերջ, գինիին գաւաթը առաւ եւ պարպեց:

Ինքնիրէն՝

-Դրամը որո՞ւ տալու է, մոլտաց:

Օրը մթազնիլ սկսած էր: Քիչ վերջ նաւամատոյցի կայմին վրայի ագռաւը աննշմարելի եղաւ մոլթին մէջ: Հեռուէն պլպլը-լացող քանի մը լոյսեր գինետան պատուհանէն եւ բաց դռնէն կը տեսնուէին: Այս լքուած գինետան մէջ հազիւ ութը սեղան կար: Դրան կից, ձեր գինեպանին կողմէ պատրաստուած խարխուլ պիւֆէն գետեղուած էր: Իրիկուան հովուն հետ պատուհանին վարագոյրը եւ սեղանի ծածկոցները շարժիլ սկսած էին: Օտարականը նայուածքը այս բոլորին վրայ պտտցնելէ վերջ ծակած տախտակամածին նայեցաւ: Պահ մը վերջ, երբ տախտակամածին գորշութեան վրայ յառաջացող եւ յետոյ կանգ առնող ստուեր մը տեսաւ, յանկարծ դրան կողմը նայեցաւ: Ծիչդ այդ պահուն մօտակայ եկեղեցիին զանգակը շտապ ղօղանջներ արձակել սկսաւ: Դրան առջեւ բարձրահասակ, խարտեաչ մարդ մը կեցած էր: Զանգակի ղօղանջներուն ներքեւ, դուրսը, աճապարանքով եւ վախու ճիչեր արձակելով՝ մարդիկ դէպի եկեղեցիին բարձունքը կը վազէին: Բարձրահասակը նոյնպէս կեցած էր սեմին եւ օտարականին կը նայէր: Երբ զանգակին զարկերէն զատ, վազվուտկող բազմութեան աղմուկը դադրեցաւ, այն ատեն բարձրահասակ մարդը դանդաղ քայլերով խարխուլ պիւֆէն գնաց եւ հոնկէ շիշ մը ըմպելի առնելով օտարականին ցոյց տուաւ: